**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**

***ՊԱՏԳԱՄԱՎՈՐ***

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սիմոնյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածների՝ որպես օրենսդրական նախաձեռնություն, Ձեզ ենք ներկայացնում «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

ա) օրենքների նախագծերի փաթեթը (հիմնական զեկուցող՝ Նարեկ Զեյնալյան).

բ) օրենքների նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը.

գ) գործող օրենքներում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները.

դ) օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով օրենքի նախագծերի փաթեթը դնել շրջանառության մեջ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝ ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

# «ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը «ոլորտում» բառից հետո լրացնել «օժանդակ» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Օրենքի հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **վերարտադրողական առողջություն**՝ մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական լիակատար բարեկեցության վիճակ՝ կապված վերարտադրողական համակարգի, դրա գործառույթների ու կենսընթացների հետ.

2) **հղիության արհեստական ընդհատում (աբորտ)**՝ բժշկական միջամտություն, որը կատարվում է հղիության ընդհատման նպատակով մինչև հղիության 22 շաբաթը.

3) **բժշկական ամլացում**՝ վիրաբուժական միջամտություն, որը կիրառվում է որպես մշտական բեղմնականխման եղանակ և կատարվում է միայն կամավոր սկզբունքով.

4) **վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ (այսուհետ՝ ՎՕՏ)**՝ գործողություններ և միջամտություններ, որոնք ներառում են մարդու ձվաբջիջների, սերմի կամ սաղմերի հետ փորձանոթային պայմաններում իրականացվող գործողություններ անպտղության խնդրի հաղթահարման և հղիության հասնելու նպատակով: Այն ներառում է, բայց չի սահմանափակվում միայն արտամարմնային բեղմնավորումով և սաղմի տեղադրմամբ, սեռաբջիջների, վերարտադրողական օրգանների հյուսվածքների և սաղմի կրիոպահպանումով, ձվաբջիջների և սաղմերի նվիրատվությամբ և փոխնակ մայրությամբ: ՎՕՏ-ը չի ներառում օժանդակ սերմնավորում՝ ամուսնու կամ դոնորի սերմով.

5) **օժանդակ սերմնավորում՝** տղամարդու մշակված սերմի (սպերմայի) արհեստական ճանապարհով ներմուծում կնոջ հեշտոց կամ արգանդի խոռոչ.

6) **արտամարմնային (փորձանոթային) բեղմնավորում և սաղմի տեղափոխում՝** կնոջ օրգանիզմից դուրս լաբորատոր պայմաններում սերմնաբջջի և ձվաբջջի կորիզանյութերի միավորում, առաջացած սաղմի փորձանոթային զարգացում և տեղափոխում արգանդի խոռոչ.

7) **դեռահասներ՝** բժշկակենսաբանական (ֆիզիոլոգիական) հասկացություն, որը ներառում է 10-ից մինչև 18 տարեկան անձանց տարիքային խումբը և բնորոշում է մանկությունից լրիվ չափահասության անցումային շրջանը.

8) **նախատեսված ծնողներ՝** զույգեր կամ անհատներ, որոնք դիտարկում են փոխնակ մայրությունը որպես ծնող դառնալու միջոց իրենց կամ դոնորական սեռաբջիջներից ստացված սաղմ օգտագործելով.

9) **փոխնակ մայր՝** կին, ով սույն օրենքով սահմանված կարգով, անհատույց կամ դրամական հատուցման դիմաց կրում է հղիություն՝ նոտարական վավերացմամբ գրավոր պայմանագրի համաձայն պարտավորվում է սերունդը փոխանցել նախատեսված ծնողին (ներին) և որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը.

10) **արտամարմնային բեղմնավորմամբ ստացված սաղմ՝** կենսաբանական ծնողի (ների) կամ կենսաբանական ծնողի և դոնորի կամ դոնորների սեռաբջիջների միաձուլման արդյունքով առաջացած բեղմնավորման արգասիք, որը պետք է կրի կենսաբանական մայրը կամ երեխայի ապագա մայրը կամ փոխնակ մայրը.

11) **վերարտադրողականության դոնոր (այսուհետ՝ դոնոր)՝** այլ անձանց օգտագործման նպատակով իր բեղմնունակ սերմը կամավոր տրամադրող տղամարդ կամ իր բեղմնունակ ձվաբջիջը կամավոր տրամադրող կին.

12) **կենսաբանական ծնող՝** տղամարդ կամ կին, որի սեռաբջջից է ձևավորվում սաղմը, և որի գենոտիպի կրողը նրա ապագա երեխան է.

13) **հարազատ՝** արյունակցական 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի կապ ունեցող անձ.

14) **բեղմնականխում՝** անցանկալի հղիության կանխում ապացուցողական բժշկության միջոցների կամ մեթոդների կիրառմամբ.

15) **անպտղություն՝** զույգի մեկ տարի կանոնավոր սեռական կյանքով ապրելու և բեղմնականխման միջոցներ և մեթոդներ չօգտագործելու դեպքում կնոջ հղիության բացակայություն.

16) **վերարտադրողականության բնագավառի տվյալների բազա՝** լիազոր մարմնի կողմից վարվող ռեեստր, որը պարունակում է տեղեկատվություններ՝

ա. որպես դոնոր հանդես գալու ցանկություն հայտնած, սահմանված կարգով բժշկական հետազոտության ենթարկված և դոնոր լինելու հակացուցումներ չունեցող, սեռաբջիջը հանձնած անձանց վերաբերյալ,

բ. որպես փոխնակ մայր հանդես գալու ցանկություն հայտնած, սահմանված կարգով բժշկական հետազոտության ենթարկված և փոխնակ մայր լինելու հակացուցումներ չունեցող անձանց վերաբերյալ,

գ. արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և անհատույց տրամադրված սաղմերի վերաբերյալ։»։

**Հոդված 3.** Օրենքի 3-րդ հոդվածում «հետ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերով։

**Հոդված 4.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սեռաբջիջների և սաղմի պահպանումը, ոչնչացումը, անհատույց տրամադրումը, արտահանումը և ներմուծումը».

2) 1-ին մասի «սեռաբջիջները» բառից հետո «և» բառը փոխարինել «կամ» բառով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով.

«4. Կենսաբանական ծնողի (ծնողների) սեռաբջիջների կամ կենսաբանական ծնողների կամ կենսաբանական ծնողի և դոնորի սեռաբջիջների միաձուլման արդյունքում առաջացած սաղմերի արտահանումն ու ներմուծումը իրականացվում է կենսաբանական ծնողի գրավոր համաձայնության և բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով։ Այդ

կարգի և պայմանների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

Կենսաբանական ծնողի գրավոր համաձայնության և բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանքի ձևերը սահմանում է Կառավարությունը:

5. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրված բուժօգնության ավարտից հետո կենսաբանական ծնողներ (ծնող) հանդիսացող զույգը (կինը և տղամարդը) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կինը գրավոր համաձայնություն է (են) տալիս արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերը՝

1) անհատույց տրամադրել վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը կամ ազգությամբ հայ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի զույգին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի կնոջը.

2) ոչնչացնել.

3) պահպանել համապատասխան բժշկական կազմակերպությունում՝ դրամական հատուցման դիմաց, իսկ գրավոր համաձայնությամբ նախատեսված սաղմի պահպանման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սաղմի պահպանման ծառայություն ստանալու մասին իր ցանկությունն ամրագրող նոր

գրավոր համաձայնություն չտալու դեպքում լիազորել սաղմի պահպանումն իրականացնող բժշկական կազմակերպությանը՝

ա. անհատույց տրամադրել սաղմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը կամ ազգությամբ հայ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի զույգին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի կնոջը.

բ. ոչնչացնել:

6. Արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերի անհատույց տրամադրման, ոչնչացման, պահպանման, արտահանման վերաբերյալ գրավոր համաձայնության ձևը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը կամ ազգությամբ հայ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող օտարերկրացի զույգին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի կնոջը, սաղմի անհատույց տրամադրման, պահպանման, ոչնչացման, կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը:»:

**Հոդված 5.** Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասում «ամուսինների» բառը փոխարինել «անձի» բառով, իսկ «նրանց» բառը փոխարինել «անձի» բառով:

ՆԱԽԱԳԻԾ

**Հոդված 6.** Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը «նրանց» բառից հետո լրացնել «գրավոր դիմումի և» բառերով:

**Հոդված 7.** Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետում «մինչև 12 շաբաթական» բառերը փոխարինել «մինչև 11 շաբաթ 7 օր» բառերով.

2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) 11 շաբաթ 7 օրից մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է բացառապես բժշկական (ներառյալ՝ սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության դեպքում) ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր համաձայնությամբ կամ սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր դիմումի համաձայն:»:

3) 2-րդ մասում «12-ից մինչև» բառերը փոխարինել «11 շաբաթ 7 օրից մինչև» բառերով.

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ընդհատումը մինչև 16 տարեկան անձի դիմումով կատարվում է նրա օրինական ներկայացուցչի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորված կոնտակտային անձի գրավոր համաձայնությամբ, ընդ որում բուժհաստատության տնօրինությունը ձեռնարկում է միջոցներ՝ ապահովելու մինչև 16 տարեկան երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու և լսված լինելու իրավունքը, ինչպես նաև հաշվի առնում նրա կարծիքը՝ իր տարիքին և հասունության մակարդակին համապատասխան:».

5) 4-րդ մասում «12-րդ շաբաթը լրանալու օրվան» բառերը փոխարինել «11-րդ շաբաթվա 7-րդ օրը լրանալու օրվան» բառերով.

6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.Վիրաբուժական եղանակով հղիության արհեստական ընդհատումը և 7-22 շաբաթական ժամկետում դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատումն իրականացվում է միայն հիվանդանոցային պայմաններում մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպություններում: Դեղորայքային եղանակով

հղիության արհեստական ընդհատումը՝ մինչև 7 շաբաթական հղիության ժամկետում կարող է իրականացվել հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային պայմաններում մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպություններում:».

7) 8-րդ մասի 3-րդ կետում «մինչև 12 շաբաթական» բառերը փոխարինել «մինչև 11 շաբաթ 7 օրը կամ սոցիալական ցուցումով» բառերով.

8) 8-րդ մասի 4-րդ կետում հանել «կամ սոցիալական» բառերը, իսկ «ներկայացուցչի» բառից հետո լրացնել «, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորված կոնտակտային անձի» բառերը.

9) 8-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) մինչև 16 տարեկան անձի հղիության ընդհատման համար նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցչի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորված կոնտակտային անձի կողմից գրավոր համաձայնության ձևը:».

**Հոդված 8.** Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «կիրառել» բառից հետո լրացնել «օժանդակ սերմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով և» բառերով.

2) 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 9.** Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող զույգը՝ միայն կնոջ (ամուսնու) հետ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում, եթե ամուսիններից մեկը մինչև 55 տարեկան է (հղիությունը կրելու դեպքում կնոջ տարիքային շեմը սահմանվում է մինչև 53 տարեկան).

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող մինչև 55 տարեկան

տղամարդը կամ կինը՝ իր ցանկությամբ (հղիությունը կրելու դեպքում կնոջ տարիքային շեմը սահմանվում է մինչև 53 տարեկան).

2. Մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը՝ փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու մասով, չի տարածվում՝

ա. ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող՝ ամուսնության մեջ չգտնվող տղամարդու նկատմամբ,

բ. հղիությունը կրելու բժշկական հակացուցում չունեցող կնոջ նկատմամբ,

գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու մասով՝ ազգությամբ հայ չհանդիսացող՝ օտարերկրացիների նկատմամբ».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մասով.

«1.1. Այն դեպքում, երբ փոխնակ մոր միջոցով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող նախատեսված ծնողները (ամուսինը և կինը կամ ամուսնության մեջ չգտնվող կինը) չեն հանդիսանում ապագա երեխայի կենսաբանական ծնող, մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը տրվում է միջգերատեսչական հանձնաժողովի թույլտվությամբ, որի կազմը և գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն իրավունքը տարածվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող զույգի (ամուսին և կին), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կնոջ նկատմամբ.

2) ազգությամբ հայ լինելը հաստատող կրոնական և համայնքային կառույցների, ինչպես նաև պետական մարմինների կողմից տրամադրվող փաստաթղթերը ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող ազգությամբ հայ օտարերկրացի

զույգի կամ ամուսնության մեջ չգտնվող ազգությամբ հայ օտարերկրացի կնոջ նկատմամբ:»:

**Հոդված 10.** Օրենքի 14.1-ին հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 11.** Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն 20-38 տարեկան այն կանայք, ովքեր ունեն առնվազն մեկ երեխա, նախկինում ոչ ավել, քան 3 անգամ ծննդաբերել են, ոչ ավել, քան 1 անգամ կեսարյան հատման վիրահատության միջոցով ծննդալուծվել են, սահմանված կարգով ենթարկվել են բժշկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել բժշկական հակացուցումներ:».

2) 14-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող տղամարդը հանդիսանում է երեխայի կենսաբանական ծնողը:»:

**Հոդված 12.** Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով.

«3. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման արդյունքում ծնված երեխայի ծնողի՝ կենսաբանական ծնող լինելու փաստը հաստատվում է ԴՆԹ-ի որոշման արդյունքում՝ կենսաբանական ծնող հանդիսացող անձի ցանկությամբ:

4. Բուժման արդյունքում հղիությունը արձանագրելուց անմիջապես հետո վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բժշկական կազմակերպության կողմից պարտադիր տրամադրվում է գրավոր տեղեկատվություն՝ կենսաբանական ծնող լինելու փաստը հաստատելու նպատակով ԴՆԹ-ի որոշման հնարավորության վերաբերյալ: »:

**Հոդված 13.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 47.4-րդ հոդվածում՝

1) վերնագրում <<հյուսվածքների>> բառից հետո լրացնել հետևյալ «կամ սերմնաբջիջների, ձվաբջիջների դոնորության, փոխնակ մոր միջոցով տրամադրվող ծառայություններին առնչվող» բառերով.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4.Գովազդատուի կամ գովազդ արտադրողի կողմից սերմնաբջիջների, ձվաբջիջների դոնորությանը կամ փոխնակ մոր միջոցով տրամադրվող ծառայություններին առնչվող գովազդին ներկայացվող պահանջների խախտումով գովազդ տարածելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

5. Կենսաբանական ծնողի (ծնողների) սեռաբջիջների կամ կենսաբանական ծնողների կամ կենսաբանական ծնողի և դոնորի սեռաբջիջների միաձուլման արդյունքում առաջացած սաղմերի արտահանման և ներմուծման կարգի և պայմանների խախտումն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:»:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

### «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գովազդի մասին» 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.6-րդ և 7.7-րդ մասերով.

«7.6. Սեռաբջիջների դոնորությանն առնչվող ցանկացած գովազդն արգելվում է, եթե այն չի իրականացնում գինեկոլոգիական կամ վերարտադրողաբանական բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպությունը:

7.7 Ձվաբջիջների դոնորությանը, փոխնակ մոր միջոցով տրամադրվող ծառայություններին առնչվող ցանկացած գովազդը արգելվում է, եթե այն չի իրականացվում վերարտադրողաբանական բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կողմից:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

### 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ վերջին 3 տասնամյակների ընթացքում արձանագրվել է ծնելիության և ժողովրդագրական ցուցանիշների վատթարացում: Մասնավորապես, պտղաբերության ցածր (1.6) մակարդակը չի ապահովում անգամ պարզ վերարտադրություն, որի համար անհրաժեշտ է 2,1 գործակից:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ գործող օրենքի կիրարկման ընթացքում առաջացել են հարցեր, որոնք տարընթերցումների հիմքեր են առաջացրել: Միաժամանակ, անհրաժեշտություն է առաջացել մի շարք կարգավորումներ համապատասխանեցնել ներկայիս գործող օրենսդրական դաշտին, ինչպես նաև միջազգայինորեն ընդունված մոտեցումներին:

### 2. Առաջարկվող կարգավորումների բնույթը

1. Գործող օրենքում անչափահասների հղիության ընդհատման որոշումը կայացվում էր օրինական ներկայացուցչի կողմից, մինչդեռ, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» գործող օրենքի համաձայն, 16 տարին լրացած անձը տալիս է իր համաձայնությունը կամ կարող է հրաժարվել բժշկական միջամտությունից, ինչը նախատեսվել է նաև առաջարկվող նախագծով:

2. Գործող օրենքով հղիության արհեստական ընդհատումը կատարվում է միայն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող

բժշկական կազմակերպություններում, մինչդեռ, համաձայն ԱՀԿ-ի վերջին առաջարկների, մինչև 12 շաբաթական ժամկետը դեղորայքային եղանակով ընդհատումը կարող է կատարվել նաև արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունում:

3. Նախագծով կանոնակարգվել է փոխնակ մոր ծառայությունից օգտվելու գործընթացը, մասնավորապես, առաջարկվել է փոխնակ մոր ծառայությունից օգտվելու իրավունքը չտարածել օտարերկրյա քաղաքացիների (բացառությամբ ազգությամբ հայ), ինչպես նաև հղիությունը կրելու բժշկական հակացուցում չունեցող կնոջ նկատմամբ: Վերանայվել է փոխնակ մայր հանդիսանալու տարիքային շեմը, սահմանվել են լրացուցիչ պահանջներ՝ փոխնակ մայր հանդիսացող կնոջ առողջությունը պահպանելու նկատառումներից ելնելով, ինչպես նաև նախատեսվել է վերարտադրողականության դոնորության և փոխնակ մոր հետ առնչվող գովազդի արգելում, եթե այն չի իրականացվում գինեկոլոգիական և վերարտադրողական ծառայությունների լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից:

4. Նախագծով բարձրացվել է վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց տարիքային շեմը, դարձնելով այն 55 տարեկան, ինչպես նաև սահմանվել է ավելի բարձր տարիքային շեմ՝ մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ծնողների համար:

Վերը նշվածի հիմնավորումն այն է, որ ըստ վերարտադրողական բժշկության ամերիկյան ասոցիացիայի, կանանց տարիքը հղիության և ծննդաբերության հակացուցումների բացակայության դեպքում, կարող է ավելացվել մինչև 54 տարեկան: Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է ձվաբջջի դոնորի կիրառմամբ կանանց տարիքը սահմանափակել մինչև 53 տարեկանը, ինչը թույլ կտա խուսափել ավելի բարձր տարիքի կանանց մոտ հղիության հետ կապված հավանական ռիսկերից, նկատի ունենալով, որ տարիքի հետ զուգահեռ բարձրանում է կնոջ առողջության և կյանքի համար վտանգ ներկայացնող թե մանկաբարձական, թե ուղեկցող ախտաբանությունների առաջացման հավանականությունը, որոնք կարող են հանգեցնել հղիության անբարենպաստ, ընդհուպ մինչև մահացու ելքի:

5. Սահմանվել է պարտադիր պահանջ՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բժշկական

կազմակերպության կողմից բուժման արդյունքում, հղիությունը արձանագրելուց անմիջապես հետո պացիենտին՝ կենսաբանական ծնող լինելու փաստը հաստատելու նպատակով ԴՆԹ-ի որոշման հնարավորության վերաբերյալ գրավոր տեղեկատվություն տրամադրելու մասին:

**3.Կարգավորման նպատակը.**

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի նպատակն է՝ կարգավորել հղիության արհեստական ընդհատման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների (այսուհետ, ՎՕՏ) կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման հետ կապված հարաբերությունները՝ դրանք համահունչ դարձնելով արդի մոտեցումներին:

նախագծի նպատակն է՝ կարգավորել վերարտադրողական օժանդակ տեղնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման հետ կապված հարաբերությունները, ընդլայնել անպտուղ զույգերի կամ անձանց՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունները և բավարարել երեխա ունենալու նրանց պահանջմունքները, կանխարգելել անպտուղ միայնակ անձանց սոցիալական մեկուսացումը և բարելավել ժողովրդագրական իրավիճակը:

**4.Ակնկալվող արդյունքը.**

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման արդյունքում ակնկալվում է՝ հստակեցնել 16 տարեկանը լրացած երեխաների՝ հղիության արհեստական ընդհատման հետ կապված իրավունքները, բարելավել հղիության արհեստական ընդհատման մատչելիությունը՝ իրավունք վերապահելով դեղորայքային աբորտը սահմանված ժամկետներում իրականացնելու մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություններում, կանոնակարգել փոխնակ մորը ներկայացվող պահանջները և

նրանց ծառայություններից օգտվելու հետ կապված իրավունքները, հստակեցնել տարընթերցումներ առաջացնող դրույթները:

**5.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված են եղել ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամները, քննարկելով այն ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության հետ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունմամբ նոր օրենքների ընդունման անհրաժեշտություն չի առաջանա: Անհրաժեշտություն կլինի փոփոխության ենթարկել՝ Կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N 568-Ն «ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշումը, ինչպես նաև Կառավարության 2016 թվականի մարտի 31-ի թիվ 335-Ն որոշումը:

## ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով կարգավորվում են մարդու վերարտադրողական առողջության պահպանման, վերարտադրողական իրավունքի ապահովման, վերարտադրողականության ոլորտում ***օժանդակ*** տեխնոլոգիաների կիրառման կարգի ու պայմանների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

### Հոդված 2. Օրենքի հիմնական հասկացությունները

~~Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.~~

~~1) վերարտադրողական առողջություն՝ մարդու ֆիզիկական, մտավոր և սոցիալական լիակատար բարեկեցության վիճակ՝ կապված վերարտադրողական համակարգի, դրա գործառույթների ու կենսընթացների հետ.~~

~~2) հղիության արհեստական ընդհատում (աբորտ)՝ բժշկական միջամտություն, որը կատարվում է հղիության ընդհատման նպատակով.~~

~~3) կամավոր բժշկական ամլացում՝ վիրաբուժական միջամտություն, որը կիրառվում է որպես մշտական բեղմնականխման եղանակ և կատարվում է միայն կամավոր սկզբունքով՝ անհատի (ամուսինների) իրազեկված համաձայնության հիման վրա.~~

~~4) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ՝ բժշկական տեխնոլոգիաներ, որոնք կիրառվում են անպտղության խնդրի լուծման նպատակով.~~

~~5) արհեստական սերմնավորում՝ տղամարդու սերմի (սպերմայի) արհեստական ճանապարհով ներմուծում կնոջ օրգանիզմ.~~

~~6) արհեստական (արտամարմնական/փորձանոթային) բեղմնավորում և սաղմի ներպատվաստում՝ կնոջ օրգանիզմից դուրս արհեստական եղանակով սպերմատոզոիդի և ձվաբջջի կորիզանյութերի միավորում. արդյունքում՝ առաջացած սաղմի (դոնորական սաղմի) փորձանոթային զարգացում և ներպատվաստում արգանդի խոռոչ կամ արգանդափող.~~

~~7) դեռահասներ՝ բժշկակենսաբանական (ֆիզիոլոգիական) հասկացություն, որը ներառում է 10-18 տարեկան անձանց տարիքային խումբը և բնորոշում է մանկությունից լրիվ չափահասության անցումային շրջանը.~~

~~8) փոխնակ (սուռոգատ) մայր՝ դոնորական սաղմը իր արգանդում կրած կին, որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը.~~

~~9) դոնորական սաղմ՝ կենսաբանական ծնողի (ծնողների) և (կամ) դոնորի սեռաբջիջների միաձուլման արդյունքում առաջացած սաղմ, որը պետք է կրի կամ արդեն կրում է փոխնակ մայրը կամ կինը.~~

~~10) վերարտադրողականության (սեռաբջջի) դոնոր (այսուհետ՝ դոնոր)՝ իր բեղմնունակ սերմը տրամադրող տղամարդ կամ իր բեղմնունակ ձվաբջիջը տրամադրող կին.~~

~~11) կենսաբանական ծնող՝ տղամարդ կամ կին, որի սեռաբջջից է ձևավորվել սաղմը, և որի գենոտիպի կրողը նրա ապագա երեխան է~~

~~12) բեղմնավորման՝ անցանկալի հղիության կանխում տարբեր միջոցների և (կամ) մեթոդների կիրառմամբ.~~

~~13) անպտղություն՝ զույգի մեկ տարի կանոնավոր սեռական կյանքով ապրելու և բեղմնականխման միջոցներ և (կամ) մեթոդներ չօգտագործելու դեպքում կնոջ հղիության բացակայություն, բացառությամբ կրծքով կերակրման կամ դաշտանադադարով պայմանավորված դեպքերի.~~

~~14) հարազատ՝ արյունակցական 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի կապ ունեցող անձ.~~

~~15) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված՝ դոնորի և (կամ) փոխնակ մոր տվյալների բազա, որը պարունակում է տեղեկատվություն որպես դոնոր և (կամ) փոխնակ մայր հանդես գալու ցանկություն հայտնած, սահմանված կարգով բժշկագենետիկական հետազոտության ենթարկված և դոնոր և (կամ) փոխնակ մայր լինելու հակացուցումներ չունեցող, սեռաբջիջը հանձնած անձանց վերաբերյալ:~~

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

*1) վերարտադրողական առողջություն՝ մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական լիակատար բարեկեցության վիճակ՝ կապված վերարտադրողական համակարգի, դրա գործառույթների ու կենսընթացների հետ.*

*2) հղիության արհեստական ընդհատում (աբորտ)՝ բժշկական միջամտություն, որը կատարվում է հղիության ընդհատման նպատակով մինչև հղիության 22 շաբաթը.*

*3) բժշկական ամլացում՝ վիրաբուժական միջամտություն, որը կիրառվում է որպես մշտական բեղմնականխման եղանակ և կատարվում է միայն կամավոր սկզբունքով.*

*4) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ (այսուհետ, ՎՕՏ)՝ գործողություններ և միջամտություններ, որոնք ներառում են մարդու ձվաբջիջների, սերմի կամ սաղմերի հետ փորձանոթային պայմաններում իրականացվող գործողություններ, անպտղության խնդրի հաղթահարման և հղիության հասնելու նպատակով: Այն ներառում է, բայց չի սահմանափակվում միայն՝ արտամարմնային բեղմնավորումով և սաղմի տեղադրմամբ, սեռաբջիջների/զիգոտի/սաղմի տեղադրմամբ, սեռաբջիջների, վերարտադրողական օրգանների հյուսվածքների և սաղմի կրիոպահպանումով,*

*ձվաբջիջների և սաղմերի նվիրատվությամբ և փոխնակ մայրությամբ: ՎOS-ը չի ներառում օժանդակ սերմնավորում ՝ամուսնու կամ դոնորի սերմով:*

*5) օժանդակ սերմնավորում՝ տղամարդու մշակված սերմի (սպերմայի) արհեստական ճանապարհով ներմուծում կնոջ հեշտոց կամ արգանդի խոռոչ*

*6)արտամարմնային (փորձանոթային) բեղմնավորում և սաղմի տեղափոխում՝ կնոջ օրգանիզմից դուրս լաբորատոր պայմաններում սերմնաբջջի և ձվաբջջի կորիզանյութերի միավորում, առաջացած սաղմի փորձանոթային զարգացում և տեղափոխում արգանդի խոռոչ.*

*7) դեռահասներ՝ բժշկակենսաբանական (ֆիզիոլոգիական) հասկացություն, որը ներառում է 10-ից մինչև 18 տարեկան անձանց տարիքային խումբը և բնորոշում է մանկությունից լրիվ չափահասության անցումային շրջանը.*

*8) Նախատեսված ծնողներ՝ զույգեր կամ անհատներ, ովքեր դիտարկում են փոխնակ մայրությունը որպես ծնող դառնալու միջոց իրենց կամ դոնորական սեռաբջիջներից ստացված սաղմ օգտագործելով:*

*9) Փոխնակ մայր՝ կինը, ով անհատույց կամ դրամական հատուցման դիմաց հղիություն է կրում՝ նոտարական վավերացմամբ գրավոր պայմանագրի համաձայն՝ պայմանավորվածությամբ, որ սերունդը կտա նախատեսված ծնողին(ներին) և որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը:*

*10) արտամարմնային բեղմնավորմամբ ստացված սաղմ՝ կենսաբանական ծնողի (ծնողների) կամ կենսաբանական ծնողի և դոնորի կամ դոնորների սեռաբջիջների միաձուլման արդյունքում առաջացած բեղմնավորման արգասիք, որը պետք է կրի կենսաբանական մայրը կամ երեխայի ապագա մայրը կամ փոխնակ մայրը.*

*11) վերարտադրողականության դոնոր (այսուհետ՝ դոնոր)՝ այլ անձանց օգտագործման նպատակով իր բեղմնունակ սերմը կամավոր տրամադրող տղամարդ կամ իր բեղմնունակ ձվաբջիջը կամավոր տրամադրող կին.*

*12) կենսաբանական ծնող՝ տղամարդ կամ կին, որի սեռաբջջից է ձևավորվում է սաղմը, և որի գենոտիպի կրողը նրա ապագա երեխան է.*

*13) հարազատ՝ արյունակցական 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի կապ ունեցող անձ*

*14) բեղմնականխում՝ անցանկալի հղիության կանխում տարբեր միջոցների կամ մեթոդների կիրառմամբ.*

*15) անպտղություն՝ զույգի մեկ տարի կանոնավոր սեռական կյանքով ապրելու և բեղմնականխման միջոցներ և մեթոդներ չօգտագործելու դեպքում կնոջ հղիության բացակայություն:*

*16)* **վերարտադրողականության բնագավառի տվյալների բազա՝ լիազոր մարմնի կողմից վարվող ռեեստր, որը պարունակում է տեղեկատվություններ՝**

**ա. որպես դոնոր հանդես գալու ցանկություն հայտնած, սահմանված կարգով բժշկական հետազոտության ենթարկված և դոնոր լինելու հակացուցումներ չունեցող, սեռաբջիջը հանձնած անձանց վերաբերյալ,**

**բ. որպես փոխնակ մայր հանդես գալու ցանկություն հայտնած, սահմանված կարգով բժշկական հետազոտության ենթարկված և փոխնակ մայր լինելու հակացուցումներ չունեցող անձանց վերաբերյալ,**

**գ. արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և անհատույց տրամադրված սաղմերի վերաբերյալ:»:**

Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Հայաստանի Հանրապետությունում բնակվող կամ գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա և կիրառվում է այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում կապված է մարդու վերարտադրողականության հետ, ***բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:***

*(3-րդ հոդվածը փոփ. 29.09.16 ՀՕ-140-Ն)*

Հոդված 7. ~~Սեռաբջիջների և սաղմի պահպանումը~~ *Սեռաբջիջների և սաղմի պահպանումը, ոչնչացումը, անհատույց տրամադրումը, արտահանումը և ներմուծումը*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ամուսնական տարիքի արական և իգական սեռի անձինք իրավունք ունեն իրենց սեռաբջիջները ~~և~~ ***կամ*** սաղմը վերարտադրողական նպատակով հանձնել համապատասխան առողջապահական հաստատություններ:

2. Պետությունը երաշխավորում է քաղաքացիների տրամադրած սեռաբջիջների և սաղմի պահպանությունը նրանց կյանքը վտանգող իրավիճակներում կամ սերնդարարման ունակությունը կորցնելու ռիսկի (առողջությանը վտանգ ներկայացնող մասնագիտական գործունեություն, զինվորական պարտականությունների կատարում, ինչպես նաև այլ բժշկասոցիալական ցուցումներ) դեպքում:

3. Քաղաքացիների տրամադրած սեռաբջիջների և սաղմի պահպանման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Կենսաբանական ծնողի (ծնողների) սեռաբջիջների կամ կենսաբանական ծնողների կամ կենսաբանական ծնողի և դոնորի սեռաբջիջների միաձուլման արդյունքում առաջացած սաղմերի արտահանումն ու ներմուծումն իրականացվում է կենսաբանական ծնողի գրավոր համաձայնության և բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: Այդ կարգի և պայմանների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

Կենսաբանական ծնողի գրավոր համաձայնության ու բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանքի ձևերը սահմանում է Կառավարությունը:

5. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրված բուժօգնության ավարտից հետո կենսաբանական ծնողներ (ծնող) հանդիսացող զույգը (կինը և տղամարդը) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կինը գրավոր համաձայնություն է (են) տալիս արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերը՝

1) անհատույց տրամադրել վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը կամ ազգությամբ հայ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի զույգին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի կնոջը.

2) ոչնչացնել.

3) պահպանել համապատասխան բժշկական կազմակերպությունում՝ դրամական հատուցման դիմաց, իսկ գրավոր համաձայնությամբ նախատեսված սաղմի պահպանման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սաղմի պահպանման ծառայություն ստանալու մասին իր ցանկությունն ամրագրող նոր գրավոր համաձայնություն չտալու դեպքում լիազորել սաղմի պահպանումն իրականացնող բժշկական կազմակերպությանը՝

ա. անհատույց տրամադրել սաղմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը կամ ազգությամբ հայ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող

օտարերկրացի զույգին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի կնոջը.

բ. ոչնչացնել:

6. Արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերի անհատույց տրամադրման, ոչնչացման, պահպանման, արտահանման եվ ներմուծման վերաբերյալ գրավոր համաձայնության ձևը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կնոջը կամ ազգությամբ հայ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող օտարերկրացի զույգին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող օտարերկրացի կնոջը, սաղմի անհատույց տրամադրման, պահպանման, ոչնչացման, արտահանման և ներմուծման կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 8. Բեղմնականխման միջոցների և (կամ) մեթոդների օգտագործումը**
***(վերնագիրը փոփ. 30.04.15 ՀՕ-24-Ն)***

1. Յուրաքանչյուր կին ունի անվտանգ մայրության և անցանկալի հղիությունից ու հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով բեղմնականխման արդյունավետ միջոցներից և (կամ) մեթոդներից օգտվելու իրավունք:

2. Առողջապահական ծառայությունները հավաստի տեղեկատվություն են տրամադրում բեղմնականխման առկա միջոցների և մեթոդների ապահովության, արդյունավետության և անվտանգության վերաբերյալ՝ պտղաբերության կարգավորման իրազեկված ընտրություն կատարելու նպատակով:

3. Առողջապահական ծառայություններում պտղաբերության կարգավորման միջոցների և (կամ) մեթոդների ընտրությունը հիմնվում է ~~ամուսինների~~անձի (կնոջ կամ տղամարդու) վերարտադրողական պատմության, առողջական վիճակի, տարիքի,

անհատական առանձնահատկությունների ու նախապատվությունների վրա, իսկ կիրառումն իրականացվում է միայն ~~նրանց~~ *անձի* լիակատար, ազատ և գիտակցված համաձայնությամբ:

4. Պտղաբերության կարգավորման և բեղմնականխման միջոցները և մեթոդները կիրառվում են որպես անցանկալի հղիությունից և հղիության արհեստական ընդհատումից խուսափելու միջոց:

***(8-րդ հոդվածը փոփ. 30.04.15 ՀՕ-24-Ն)***

**Հոդված 9. Կամավոր բժշկական ամլացումը**

1. Չափահաս կանայք և տղամարդիկ իրավունք ունեն դիմելու կամավոր բժշկական ամլացման՝ անցանկալի հղիությունից պաշտպանվելու նպատակով:

2. Կամավոր բժշկական ամլացումն իրականացվում է բուժհաստատություններում միայն չափահաս անձանց նկատմամբ՝ նրանց ***գրավոր դիմումի և*** իրազեկված համաձայնության դեպքում:

3. Կամավոր բժշկական ամլացում կատարելու կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 10. Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը)**

1. Յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման (աբորտի) իրավունք: Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը) (այսուհետ՝ ընդհատում)՝

1) մինչև ~~12~~ ***11 շաբաթ 7 օր*** ~~շաբաթական~~ հղիության ժամկետը կատարվում է կնոջ գրավոր դիմումի համաձայն: Բժշկական ցուցումների դեպքում ընդհատումը մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը իրականացվում է կնոջ գրավոր համաձայնությամբ.

~~2) 12-ից մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է բացառապես բժշկական (ներառյալ՝ սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության դեպքում)~~ ~~***ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր համաձայնությամբ***~~ կամ ~~սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր **դիմումի** համաձայնությամբ:~~

2) 11 շաբաթ 7 օրից մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է բացառապես բժշկական (ներառյալ՝ սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության դեպքում) ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր համաձայնությամբ կամ սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր դիմումի համաձայն:

2. Բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված ~~12-ից մինչև~~ ***11 շաբաթ 7 օրից մինչև*** 22 շաբաթական ընդհատումն արգելվում է:

~~3. Ընդհատումը անչափահասի~~ ~~***մինչև 16 տարեկան երեխայի***~~ անձի դիմումով ~~կատարվում է նրա օրինական ներկայացուցչի իչների,~~ ~~***իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորված կոնտակտային անձի գրավոր համաձայնությամբ,***~~ իսկ ~~դրա անհնարինության դեպքում՝ առողջապահական հաստատության գործադիր մարմնի ղեկավարի համապատասխան ակտով ստեղծված մշտապես գործող բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա,~~ ~~***ընդ որում բուժհապարտության փնօրինությունը ձեռնարկում***~~

~~***է միջոցներ՝ ապահովելու մինչև 16 տարեկան երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու և լսված լինելու իրավունքը, ինչպես նաև հաշվի առնում նրա կարծիքը՝իր տարիքին և հասունության մակարդակին համապատասխան:***~~

<u>3. Ընդհատումը մինչև 16 տարեկան անձի դիմումով կատարվում է նրա օրինական ներկայացուցչի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորված կոնտակտային անձի գրավոր համաձայնությամբ, ընդ որում բուժհաստատության տնօրինությունը ձեռնարկում է միջոցներ՝ ապահովելու մինչև 16 տարեկան երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու և լսված լինելու իրավունքը, ինչպես նաև հաշվի առնում նրա կարծիքը՝ իր տարիքին և հասունության մակարդակին համապատասխան:</u>

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում ընդհատումից առաջ բժիշկը իրեն դիմած հղի կնոջը պարտավոր է տրամադրել ընդհատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու ժամանակահատված՝ երեք օրացուցային օր ժամկետով (իսկ եթե երրորդ օրացուցային օրը համընկնում է հղիության ~~***12-րդ շաբաթը լրանալու օրվան***~~ <u>***11 շաբաթ 7 օր***ը լրանալու օրվան</u>, ապա մինչև այդ ժամկետը լրանալը), որը հաշվվում է կնոջ՝ ընդհատման համար բժշկին առաջին անգամ դիմելու պահից:

<u>5. ***Վիրաբուժական եղանակով հղիության արհեստական ընդհատումը և 7-22 շաբաթական ժամկետում դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատումը իրականացվում է միայն հիվանդանոցային պայմաններում մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում: Դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատումը՝ մինչև 7 շաբաթական հղիության ժամկետում կարող է իրականացվել հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային պայմաններում մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում:***</u>

6. Ընդհատման բժշկական միջամտությունն իրականացնելուց անմիջապես առաջ բժիշկը պարտավոր է կնոջը ընդհատման հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ տրամադրել անվճար խորհրդատվություն, որի մասին բժիշկը գրառում է ընդհատման համար դիմած կնոջ բժշկական փաստաթղթերում, և որը հաստատվում է կնոջ ստորագրությամբ:

7. Ընդհատման բժշկական միջամտությունն իրականացնելուց անմիջապես հետո բժիշկը պարտավոր է կնոջը անցանկալի հղիությունը կանխելու միջոցների և (կամ) մեթոդների ընտրության վերաբերյալ տրամադրել անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն, որի մասին բժիշկը գրառում է ընդհատման համար դիմած կնոջ բժշկական փաստաթղթերում, և որը հաստատվում է կնոջ ստորագրությամբ:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները, ներառյալ՝

1) ընդհատման հակացուցումները և անհրաժեշտ հետազոտությունների ցանկը.

2) ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումների ցանկը.

3) ~~մինչև 12 շաբաթական~~ <u>**մինչեվ 11 շաբաթ 7 օրը կամ սոցիալական ցուցումով**</u> ընդհատման համար հղի կնոջ կողմից ներկայացվող գրավոր դիմումի ձևը.

4) բժշկական ~~կամ սոցիալական~~ ցուցումներից ելնելով՝ ընդհատման համար հղի կնոջ կամ նրա օրինական ներկայացուցչի, ***իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորված կոնտակտային անձի*** կողմից ներկայացվող գրավոր համաձայնության ձևը.

~~5) անչափահասի ***մինչև 16 տարեկան*** *անձի* ***երեխայի*** հղիության ընդհատման համար նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցչի իչների, ***իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորված կոնտակտային անձի*** կողմից գրավոր համաձայնության ձևը:~~

5) մինչև 16 տարեկան անձի հղիության ընդհատման համար նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցչի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորված կոնտակտային անձի կողմից գրավոր համաձայնության ձևը:».

9. Սույն հոդվածով սահմանված պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

***(10-րդ հոդվածը փոփ. 30.04.15 ՀՕ-24-Ն, խմբ. 29.06.16 ՀՕ-134-Ն)***

### Հոդված 11. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը

1. Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է կիրառել ***օժանդակ սերմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով և*** վերարտադրողականության հետևյալ օժանդակ տեխնոլոգիաները.

~~1) արհեստական սերմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով.~~

2) արհեստական (արտամարմնական/փորձանոթային) բեղմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով և սաղմի ներպատվաստում.

3) դոնորական սաղմի ներպատվաստում փոխնակ մոր արգանդում:

2. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաները կիրառվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած բժշկասոցիալական ցուցումների հիման վրա:

3. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա երեխայի սեռը պլանավորել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն, կամ ընտանիքն ունի նույն սեռի 3 երեխա:

4. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Արհեստական սերմնավորումը կարող է իրականացվել գինեկոլոգիական կամ վերարտադրողաբանական (ռեպրոդուկտոլոգիական) բժշկական օգնության և սպասարկման տեսակների շրջանակներում, արհեստական (արտամարմնական /փորձանոթային) բեղմնավորումը և սաղմի ներպատվաստումն իրականացվում են վերարտադրողաբանական (ռեպրոդուկտոլոգիական) բժշկական օգնության և սպասարկման տեսակի շրջանակներում:

***(11-րդ հոդվածը փոփ. 21.03.12 ՀՕ-85-Ն, լրաց. 04.06.21 ՀՕ-264-Ն)***

### Հոդված 12. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված իրավական հարաբերությունները

~~1. Մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն`~~

~~1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինը (մինչև 53 տարեկան կինը)՝ միայն կնոջ (ամուսնու) հետ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում.~~

~~2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ մինչև 53 տարեկան կինը՝ իր ցանկությամբ: Սույն իրավունքը՝ փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու մասով, չի տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող և հայկական ծագում չունեցող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացիների և ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող՝ ամուսնության մեջ չգտնվող տղամարդու նկատմամբ.~~

~~3) փոխնակ մոր միջոցով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող զույգը կամ փոխնակ մոր ծառայությունից օգտվելու ցանկություն հայտնած կինը կամ հայկական ծագում ունեցող և հայկական ծագումը հաստատող կրոնական և համայնքային կառույցների, ինչպես նաև պետական մարմինների կողմից տրամադրվող փաստաթղթերը ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացի զույգը կամ կինը՝ միջգերատեսչական հանձնաժողովի թույլտվությամբ, եթե ամուսինը և կինը կամ ամուսնության մեջ չգտնվող կինը չեն հանդիսանում ապագա երեխայի կենսաբանական ծնող: Հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը:~~

«1. Մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող զույգը՝ միայն կնոջ (ամուսնու) հետ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում, եթե ամուսիններից մեկը մինչև 55 տարեկան է (հղիությունը կրելու դեպքում կնոջ տարիքային շեմը սահմանվում է մինչև 53 տարեկան).

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող մինչև 55 տարեկան տղամարդը կամ կինը՝ իր ցանկությամբ (հղիությունը կրելու դեպքում կնոջ տարիքային շեմը սահմանվում է մինչև 53 տարեկան).

2. Մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը՝ փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու մասով, չի տարածվում՝

ա. ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող՝ ամուսնության մեջ չգտնվող տղամարդու նկատմամբ,

բ. հղիությունը կրելու բժշկական հակացուցում չունեցող կնոջ նկատմամբ,

գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու մասով՝ ազգությամբ հայ չհանդիսացող՝ օտարերկրացիների նկատմամբ.

1.1. Այն դեպքում, երբ փոխնակ մոր միջոցով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող նախատեսված ծնողները (ամուսինը և կինը կամ ամուսնության մեջ չգտնվող կինը) չեն հանդիսանում ապագա երեխայի կենսաբանական ծնող, մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը տրվում է միջգերատեսչական հանձնաժողովի թույլտվությամբ, որի կազմը և գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն իրավունքը տարածվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող զույգի (ամուսին և կին), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կնոջ նկատմամբ.

2) ազգությամբ հայ լինելը հաստատող կրոնական և համայնքային կառույցների, ինչպես նաև պետական մարմինների կողմից տրամադրվող փաստաթղթերը ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող ազգությամբ հայ օտարերկրացի զույգի կամ ամուսնության մեջ չգտնվող ազգությամբ հայ օտարերկրացի կնոջ նկատմամբ:

2. *(մասն ուժը կորցրել է 04.06.21 ՀՕ-264-Ն)*

3. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք իրավունք ունեն առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով նախապես իրազեկվել՝

1) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված ժառանգաբանական, բժշկագիտական և իրավական հարցերի մասին.

2) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման գործելակարգի մասին.

3) դոնորի կամ փոխնակ մոր արտաքին տվյալների, ազգային պատկանելության, ֆենոտիպի և բժշկագենետիկական հետազոտությունների արդյունքների մասին:

4. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք (ամուսինները) իրավունք ունեն ընտրել սեռաբջջի դոնորին և (կամ) փոխնակ մորը:

5. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ իրականացնելիս հաշվառվում են միայն այն դոնորների և փոխնակ մայրերի վերաբերյալ տեղեկությունները, ովքեր բժշկագենետիկական հետազոտության են ենթարկվել համապատասխան առողջապահական հաստատություններում և չունեն դոնոր կամ փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

6. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձանց՝ որպես ծնողների և այդ տեխնոլոգիաների օգտագործման արդյունքում ծնված երեխայի (երեխաների) միջև իրավական փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

***(12-րդ հոդվածը լրաց., խմբ. 29.09.16 ՀՕ-140-Ն, փոփ. 21.01.20 ՀՕ-37-Ն, փոփ., խմբ., լրաց. 04.06.21 ՀՕ-264-Ն)***

**Հոդված 13. Մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված պայմանագրերը**

Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց և փոխնակ մոր կամ հայտնի դոնորի դեպքում փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքվող գրավոր պայմանագրերով, որոնք ենթակա են նոտարական վավերացման:

**Հոդված 14. Վերարտադրողականության (սեռաբջջի) դոնորությունը**

1. Դոնոր լինելու իրավունք ունեն 18-40 տարեկան այն տղամարդիկ և 18-35 տարեկան այն կանայք, որոնք ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր լինելու բժշկական հակացուցումներ:

2. Հայտնի դոնոր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (18 տարեկանից սկսած) այն տղամարդիկ և կանայք, ովքեր ցանկանում են իրենց սեռաբջիջը կամ սաղմը տրամադրել հարազատներին կամ իրենց հետ ազգակցական կապի մեջ չգտնվող և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բուժօգնության կարիք ունեցող զույգին (անձին), ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր լինելու բժշկական հակացուցումներ:

3. Վերարտադրողականության դոնոր լինելու բժշկական հակացուցումների ցանկը սահմանում է առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը:

4. Դոնորի նկատմամբ ներկայացվող լրացուցիչ պահանջները, դոնորական սերմի կամ ձվաբջջի տրամադրման և դրանց պահպանման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Դոնորն իր բեղմնունակ սերմը կամ ձվաբջիջը տրամադրելու համար կարող է ստանալ դրամական հատուցում համապատասխան առողջապահական հաստատության կամ սեռաբջիջն օգտագործող անձի կամ զույգի կողմից՝ նախապես կնքված և սահմանված կարգով վավերացված պայմանագրի համաձայն:

6. Դոնորը չունի որևէ իրավունք և չի կրում որևէ պարտականություն օժանդակ տեխնոլոգիաների օգտագործման արդյունքում իրենից սերված երեխայի նկատմամբ:

***(14-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՀՕ-37-Ն, խմբ., փոփ., լրաց. 04.06.21 ՀՕ-264-Ն)***

## ~~Հոդված 14.1. Սաղմի պահպանումը, ոչնչացումը, անհատույց տրամադրումը~~

~~1. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրված բուժօգնության ավարտից հետո կենսաբանական ծնողներ (ծնող) հանդիսացող զույգը (կինը և տղամարդը) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կինը գրավոր համաձայնություն է (են) տալիս արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերը՝~~

~~1) անհատույց տրամադրել վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով բուժօգնություն մատուցող բժշկական կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կնոջը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող և հայկական ծագում ունեցող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացի զույգին կամ կնոջը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող և հայկական ծագում չունեցող Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացիների.~~

~~2) ոչնչացնել.~~

~~3) պահպանել համապատասխան բժշկական կազմակերպությունում՝ դրամական հատուցման դիմաց, իսկ գրավոր համաձայնությամբ նախատեսված սաղմի պահպանման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սաղմի պահպանման ծառայություն ստանալու մասին իր ցանկությունն ամրագրող նոր գրավոր համաձայնություն չտալու դեպքում լիազորել սաղմի պահպանումն իրականացնող բժշկական կազմակերպությանը՝~~

~~ա. անհատույց տրամադրել սաղմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կնոջը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող և հայկական ծագում ունեցող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացի զույգին կամ կնոջը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող և հայկական ծագում չունեցող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացիների,~~

~~բ. ոչնչացնել:~~

~~2. Արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերի անհատույց տրամադրման, ոչնչացման կամ պահպանման վերաբերյալ գրավոր համաձայնության ձևը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կնոջը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող և հայկական ծագում ունեցող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացի զույգին կամ կնոջը, սաղմի անհատույց տրամադրման կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը:~~

~~(14.1-ին հոդվածը լրաց. 04.06.21 ՀՕ-264-Ն)~~

## Հոդված 15. Փոխնակ մայրությունը

1. ~~Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20-35 տարեկան այն կանայք, ովքեր սահմանված կարգով ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ:~~

1. Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն 20-38 տարեկան այն կանայք, ովքեր ունեն առնվազն մեկ երեխա, նախկինում ոչ ավել, քան 3 անգամ ծննդաբերել են, ոչ ավել, քան 1 անգամ կեսարյան հատման վիրահատության միջոցով ծննդալուծվել են, սահմանված կարգով ենթարկվել են բժշկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել բժշկական հակացուցումներ:

2. Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20 տարեկանից սկսած) այն կանայք, ովքեր ցանկանում են կրել հարազատների կողմից տրամադրված սաղմով հղիությունը, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող կինը կարող է փոխնակ մայր լինել ամուսնու համաձայնությամբ:

4. Կինը չի կարող հանդես գալ որպես փոխնակ մայր, եթե՝

1) առկա է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած բժշկական հակացուցումներից որևիցե մեկը կամ

2) նախկինում առնվազն երկու անգամ հանդես է եկել որպես փոխնակ մայր:

5. Փոխնակ մայրը միաժամանակ չի կարող լինել ձվաբջջի դոնոր:

6. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձանց և փոխնակ մոր միջև փոխհարաբերությունները կարգավորվում են գրավոր պայմանագրերով, որոնք ենթակա են նոտարական վավերացման:

7. Փոխնակ մայրը պարտավոր է բժշկական հաշվառման կանգնել հղիության վաղ ժամկետներում (մինչև հղիության 12 շաբաթը), մշտապես գտնվել բժշկի հսկողության տակ, խստորեն կատարել նրա խորհուրդները և հետևել իր առողջությանը:

8. Փոխնակ մայրը վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձից կամ ամուսիններից առանձին ապրելու դեպքում պարտավոր է վերջիններիս տեղեկացնել հղիության ընթացքի մասին:

9. Փոխնակ մայրն իրավունք չունի հրաժարվել իրենից ծնված երեխային հանձնել սույն օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած անձանց՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձին կամ ամուսիններին:

10. Փոխնակ մայրն իրենից ծնված երեխայի նկատմամբ չունի որևէ իրավունք և չի կրում որևէ պարտականություն երեխային սահմանված կարգով պայմանագիր կնքած անձին կամ ամուսիններին հանձնելու պահից:

11. Փոխնակ մայրը հղիություն կրելու և ծննդաբերելու համար կարող է ստանալ դրամական հատուցում՝ համապատասխան առողջապահական հաստատության կամ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձի կամ ամուսինների և փոխնակ մոր կողմից նախապես կնքված պայմանագրով սահմանված կարգով:

12. Փոխնակ մոր հետ պայմանագիր կնքած վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձը (ամուսինները) կրում է (են) բոլոր այն ծախսերը, որոնք կապված են հղիության ընթացքի, ծննդաբերության, ինչպես նաև բժշկական փաստաթղթերով հաստատված բարդությունների վերացման հետ:

13. ***(մասն ուժը կորցրել է 21.03.12 ՀՕ-85-Ն)***

14. Փոխնակ մորից ծնված երեխան սույն օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձին է հանձնվում, եթե ԴՆԹ-ի (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) որոշման արդյունքում հաստատվում է, որ՝

1) ***(կետն ուժը կորցրել է 04.06.21 ՀՕ-264-Ն)***

2) փոխնակ մայրը չի հանդիսանում երեխայի կենսաբանական ծնողը:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող տղամարդը հանդիսանում է երեխայի կենսաբանական ծնողը:

15. ԴՆԹ-ի որոշման (ներառյալ՝ նմուշառման) իրականացման կարգը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

***(15-րդ հոդվածը խմբ., փոփ. 21.03.12 ՀՕ-85-Ն, փոփ. 30.04.15 ՀՕ-24-Ն, խմբ., լրաց. 29.09.16 ՀՕ-140-Ն, փոփ. 04.06.21 ՀՕ-264-Ն)***

**Հոդված 16. Կենսաբանական ծնողը**

1. Կենսաբանական ծնողն իր բեղմնունակ սերմը կամ բեղմնունակ ձվաբջիջը տրամադրելու համար դրամական հատուցում չի ստանում:

2. Կենսաբանական ծնողը համարվում է ապագա երեխայի ծնողը և նրա նկատմամբ ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

***3. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման արդյունքում ծնված երեխայի ծնողի՝ կենսաբանական ծնող լինելու փաստը հաստատվում է ԴՆԹ-ի որոշման արդյունքում՝ կենսաբանական ծնող հանդիսացող անձի ցանկությամբ:***

***4. Բուժման արդյունքում հղիությունը արձանագրելուց անմիջապես հետո վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բժշկական կազմակերպության կողմից պարտադիր տրամադրվում է գրավոր տեղեկատվություն՝ կենսաբանական ծնող լինելու փաստը հաստատելու նպատակով ԴՆԹ-ի որոշման հնարավորության վերաբերյալ:***

## ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ
## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԳԻՐՔ

**Հոդված 47.4**

**Բուժտեխնիկայի, բուժական մեթոդների գովազդին ներկայացվող պահանջները խախտելը, արյան կամ դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության կամ մարդու օրգանների և հյուսվածքների *կամ սեմնաբջիջների, ձվաբջիջների դոնորության, փոխնակ մոր միջոցով տրամադրվող ծառայություններին առնչվող* առևտրային (կոմերցիոն) բնույթ կրող գովազդը**

Գովազդատուի կողմից բուժտեխնիկայի կամ բուժական մեթոդների գովազդը առանց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության, ինչպես նաև թույլտվության պայմանների խախտմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

Գովազդատուի կամ գովազդ արտադրողի կողմից չլիցենզավորված սուբյեկտների գովազդ տարածելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Գովազդատուի կամ գովազդ արտադրողի կողմից արյան կամ դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության կամ մարդու օրգանների և հյուսվածքների առևտրային (կոմերցիոն) բնույթ կրող գովազդը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

***Գովազդատուի կամ գովազդ արտադրողի կողմից սեմնաբջիջների, ձվաբջիջների դոնորությանը կամ փոխնակ մոր միջոցով տրամադրվող ծառայություններին առնչվող գովազդին ներկայացվող պահանջների խախտումով գովազդ տարածելը՝***

***առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:***

Կենսաբանական ծնողի (ծնողների) սեռաբջիջների կամ կենսաբանական ծնողների կամ կենսաբանական ծնողի և դոնորի սեռաբջիջների միաձուլման արդյունքում առաջացած սաղմերի արտահանման և ներմուծման կարգի և պայմանների խախտումն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:»:

Սույն հոդվածով նախատեսված արարքներից որևէ մեկը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նախորդ դեպքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 15. Ապրանքների առանձին տեսակների գովազդի առանձնահատկությունները**

1. Ալկոհոլային խմիչքների գովազդի դեպքերում արգելվում է՝

ա) ներշնչել, որ ալկոհոլն ունի բուժական, խթանող, հանգստացնող և լարվածությունը թուլացնող հատկություններ.

բ) դրդել սպառողներին ալկոհոլի օգտագործմանը, բացասական գնահատական տալ չափավոր օգտագործմանը կամ չօգտագործմանը.

գ) ներկայացնել խմիչքներում ալկոհոլի բարձր աստիճանը՝ որպես դրական հատկություն.

դ) ներշնչել, որ ալկոհոլային խմիչքներ օգտագործելն էական է բարեհաջող կազմված ձեռք բերելու, հասարակական հաջողության հասնելու կամ գրավչություն ստանալու համար.

ե) նկարահանել և պատկերել 25 տարեկանից ցածր տարիք ունեցող անձանց:

2. Արգելվում են ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների), ծխախոտային արտադրատեսակների նմանակների, ներառյալ՝ դրանց օգտագործման գովազդի բոլոր ձևերը:

3. Արգելվում է ալկոհոլային խմիչքների գովազդման ժամանակ դիմել անմիջապես անչափահասներին:

4. Արգելվում է ալկոհոլային խմիչքների գովազդի ժամանակ ցույց տալ կամ պատկերել դրանց օգտագործման ընթացքը:

5. Արգելվում է՝

ա) ***(կետն ուժը կորցրել է 13.02.20 ՀՕ-94-Ն)***

բ) զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով ժամը 06:00-ից մինչև 22:30-ը ցուցադրել թունդ ալկոհոլային խմիչքների (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային միավոր) գովազդ:

5.1. Արգելվում է՝

ա) ***(կետն ուժը կորցրել է 13.02.20 ՀՕ-94-Ն)***

բ) ալկոհոլային խմիչքների գովազդ տեղադրել լրագրերի կամ ամսագրերի առաջին էջի ու կազմի վրա:

5². ***(մասն ուժը կորցրել է 13.02.20 ՀՕ-94-Ն)***

5³. ***(մասն ուժը կորցրել է 13.02.20 ՀՕ-94-Ն)***

6. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդն արգելվում է:

7. Արգելվում է դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդը՝ առանց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության:

Արգելվում է այն դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդը, որոնց կիրառումը պահանջում է բժշկի հատուկ նշանակում:

Դրանց ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

7¹. Դեղերի գովազդի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

7². Բուժտեխնիկան և բուժական մեթոդները զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային և տպագիր միջոցներով կամ արտաքին գովազդային վահանակների միջոցով գովազդելու դեպքում գովազդի վրա պետք է նշվեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության համարն ու ամսաթիվը:

7³. Բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն, դեղերի արտադրություն, բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գովազդման ժամանակ գովազդում պարտադիր պետք է նշվեն կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:

7⁴. Դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի թույլտվության տրամադրման կարգն ու այդ գովազդին ներկայացվող պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.⁵. Արգելվում է մարդու օրգանների և հյուսվածքների առևտրային (կոմերցիոն) բնույթ կրող գովազդը:

7.6. Սեռաբջիջների դոնորությանն առնչվող ցանկացած գովազդն արգելվում է, եթե այն չի իրականացնում գինեկոլոգիական կամ վերարտադրողաբանական բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպությունը:

7.7 Ձվաբջիջների դոնորությանը, փոխնակ մոր միջոցով տրամադրվող ծառայություններին առնչվող ցանկացած գովազդը արգելվում է, եթե այն չի իրականացվում վերարտադրողաբանական բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կողմից:

8. Արգելվում է զենքի և ռազմամթերքի գովազդը՝ բացառությամբ քաղաքացիական զենքի և ռազմամթերքի:

9. Գովազդային վիճակախաղի դրամական շահումների գովազդելը զանգվածային տեղեկատվության միջոցներով արգելվում է:

10.Խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի շահումային ֆոնդի խաղարկության հեռարձակում կարող է իրականացվել լիազոր մարմնի հետ համաձայնեցված՝ վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգով սահմանված պարբերականությամբ, ընդ որում այն կարող է հեռարձակվել տեսալսողական հաղորդմամբ ժամը 22:00-07:00-ն ընկած ժամանակահատվածում, և դրա ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 րոպեն:

Արտաքին գովազդը չպետք է գերազանցի 5 մետր քառակուսին և պարունակելու է միայն իր ֆիրմային անվանումը (լոգոն), իսկ շենքերի, շինությունների կամ սրահների մուտքերի մոտ արտաքին գովազդը չպետք է գերազանցի 0.5 մետր քառակուսին և պարունակելու է միայն իր ֆիրմային անվանումը (լոգոն):

Տոտալիզատորներ, շահումով խաղեր, ինտերնետ շահումով խաղեր կամ խաղատներ գովազդելիս պետք է տեսանելի լինի «21+» նշագրումը, իսկ խաղարկությունով, ոչ խաղարկությունով կամ համակցված վիճակախաղ գովազդելիս՝ «18+» նշագրումը:

Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիա չստացած վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կազմակերպիչներն իրավունք չունեն իրականացնելու համապատասխան գործունեության գովազդ Հայաստանի Հանրապետությունում:

Արգելվում է սույն մասով չնախատեսված եղանակով և միջոցներով իրականացնել գովազդ:

11. Վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան գովազդի ժամանակ արգելվում է դրամական միջոցների կամ անչափահասների կերպարների ցուցադրումը:

11.1. Վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կամ խաղատների գովազդի ժամանակ արգելվում է՝

ա) որևէ կերպ դիմել անչափահասներին.

բ) տպավորություն ստեղծել, թե խաղին մասնակցելն ապահովում է պարբերաբար եկամուտ (շահույթ) ստանալու հնարավորությունը կամ աշխատանքի այլընտրանք է.

գ) տպավորություն ստեղծել, թե եկամուտ (շահույթ) ստանալը երաշխավորված է.

դ) ներշնչել, որ խաղի միջոցով հնարավոր է հասնել հասարակական, մասնագիտական, մարզական հաջողության.

ե) քննադատել վիճակախաղին կամ ինտերնետ շահումով խաղին չմասնակցելը:

11.2. Վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կամ խաղատների գովազդը պետք է պարունակի ոչ սթափ կամ հոգեճնշող վիճակում խաղալու անթույլատրելիության վերաբերյալ նախազգուշացնող տեղեկատվություն:

11.3. Վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, խաղատների կամ խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի շահումային Փոնդի խաղարկության գովազդը պարտադիր պարունակելու է հետևյալ բովանդակությամբ նախազգուշացում.

«Նախազգուշացում՝ խաղին մասնակցությունը նյութական վնասներ կրելու ռիսկ է պարունակում» կամ «Նախազգուշացում՝ խաղին մասնակցելով կարող եք կրել նյութական վնասներ:»: Ընդ որում, նշված նախազգուշացումը պետք է լինի ոչ պակաս շեշտադրված, քան գովազդում առկա մնացած տեղեկատվությունը:

12. Արգելվում է վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, խաղատան, գիշերային ակումբի, ծխախոտի, ինչպես նաև սույն օրենքով՝ տեսալսողական մեդիայում գովազդի համար արգելված ապրանքների և ծառայությունների՝ որպես հովանավորների հիշատակումը Հանրային հեռարձակողների ծրագրերում:

12.1. Հանրային հեռարձակողի ծրագրերում արգելվում է վիճակախաղի, ոչ խաղարկությունով վիճակախաղի, խաղարկությունով վիճակախաղի, համակցված վիճակախաղի, գովազդային վիճակախաղի, տոտալիզատորների, ինտերնետ շահումով խաղերի, գիշերային ակումբների գովազդը:

13. ***(մասն ուժը կորցրել է 04.03.22 ՀՕ-50-Ն)***

14. Մշակութային ծառայություններ մատուցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը (գովազդատուները) թատերահամերգային, հանրային միջոցառումների, փառատոների, համերգային հյուրախաղերի գովազդում, հանրային տեղեկատվության բոլոր՝ տեսալսողական, էլեկտրոնային, տպագիր կամ արտաքին գովազդի միջոցներում պարտադիր տեղեկություններ պետք է նշեն գովազդատուի, ձեռնարկի բովանդակության կամ ժանրային տեսակի, հեղինակի, մասնակիցների, վայրի, ժամանակի, ինչպես նաև համերգային կատարումների ձայնային առանձնահատկությունների (կենդանի կատարում կամ որևէ տեսակի ձայնագրվածքի (Փոնոգրամայի) օգտագործման մասին:

Կենդանի կատարման կամ ձայնագրվածքի մասին տեղեկատվության ծավալը, տարածքը կամ բովանդակությունը չպետք է լինեն գովազդի ողջ ծավալի, տարածքի կամ բովանդակության 7%-ից պակաս:

15. Արգելվում է շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ վիճակախաղի (այդ թվում՝ տոտալիզատոր*ի) կամ* դրանց կազմակերպիչների ցանկացած տեսակի գովազդը, բացառությամբ իր պաշտոնական կայքի կամ խաղատների կամ շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղերի կամ տոտալիզատոր*ի (խաղասրահի, բուքմեյքերային գրասենյակի)* շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ վրա, Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների կամ սույն հոդվածով սահմանված դեպքի, իսկ խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի գովազդը թույլատրվում է նաև խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի վաճառակետերում:

16. Արգելվում է կրթական, գիտական և հետազոտական ծրագրերի շրջանակներում սովորողի (աշակերտի, ուսանողի, ունկնդրի, հետազոտողի) կողմից ինքնուրույն կատարման ենթակա առաջադրանքները, հետազոտությունները և այլ գործնական աշխատանքները (ռեֆերատ, կուրսային, դիպլոմային, ատենախոսություն և այլն) կատարելու, մշակելու, պատրաստելու ծառայությունների գովազդը:

***(15-րդ հոդվածը լրաց. 28.04.99 ՀՕ-299, լրաց., խմբ. 26.06.02 ՀՕ-394-Ն, լրաց. 17.12.03 ՀՕ-4-Ն, խմբ., լրաց.16.12.05 ՀՕ-35-Ն, լրաց., փոփ. 02.05.06 ՀՕ-52-Ն, լրաց. 19.03.09 ՀՕ-67-Ն, 04.10.10 ՀՕ-143-Ն, փոփ. 14.04.11 ՀՕ-89-Ն, խմբ. 21.06.14 ՀՕ-106-Ն, փոփ., լրաց. 21.06.14 ՀՕ-126-Ն, խմբ. 17.12.14 ՀՕ-228-Ն, 20.11.14 ՀՕ-183-Ն, փոփ., խմբ. 17.05.16 ՀՕ-91-Ն, լրաց. 08.05.19 ՀՕ-29-Ն, խմբ., լրաց. 19.06.19 ՀՕ-91-Ն, խմբ., փոփ. 13.02.20 ՀՕ-94-Ն, լրաց. 16.04.20 ՀՕ-216-Ն, փոփ. 16.07.20 ՀՕ-378-Ն, 05.05.21 ՀՕ-193-Ն, փոփ., խմբ., լրաց. 04.03.22 ՀՕ-50-Ն, փոփ., խմբ. 20.12.22 ՀՕ-623-Ն, փոփ. 05.10.22 ՀՕ-371-Ն)***